Բազմակողմանի
տեղեկատվության ինստիտուտ

ԱՌՑԱՆՑ ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գևորգ Հայրապետյան

ԵՐԵՎԱՆ
2023

ԱՌՑԱՆՑ ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գևորգ Հայրապետյան

Զեկույցի հեղինակային իրավունքները պատկանում են
Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտին:
Առանց նախնական թույլտվության զեկույցի ամբողջական կամ մասնակի
վերահրատարակումը կամ այլ ձևով օգտագործելը արգելվում է:

© Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 4

Նախաբան 5

Առցանց անանունության ճանաչման օրինակներ միջազգային իրավունքում 8

Նպատակը 11

Մեթոդաբանությունը 12

Առկա վիճակը 14
- Ընդհանուր կարգավորումը 14
- Եզրահանգում 18
- Կոնկրետ կարգավորման օրինակներ 19
- Եզրահանգում 27

Առաջարկություններ 28

Հապավումների ցանկ

ՀՀ	- Հայաստանի Հանրապետություն
ԱՏՊ օրենք	- Անձնական տվյալների պաշտպանություն մասին օրենք
ՏԱ օրենք	- Տեղեկատվության ազատություն մասին օրենք
ՁԼՄ օրենք	- Ձանգվածային լրատվության մասին օրենք
ՄԱԿ	- Միավորված ազգերի կազմակերպություն
ԵՄ	- Եվրոպայի խորհուրդ
ՄԻԵԴ	- Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՔՀԿ	- քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Նախաբան

Յուրաքանչյուր ոք ունի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունք: Այս իրավունքը, անկախ բառակազմից (անձնական կամ մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունք, անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք և այլն),[1] որպես մարդու հիմնական իրավունք արտացոլված է ինչպես միջազգային իրավական ակտերում, այնպես էլ ՀՀ գործող և նախկին խմբագրությամբ Սահմանադրություններում:[2]

2010 թվականի գործող խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության գիտագործնական (դոկտրինալ) մեկնաբանություններում մարդու մասնավոր կյանքի բովանդակությունը ներկայացված էր հետևյալ կերպ՝ «(...) մասնավոր կյանքը կազմում է մարդու անձնական կյանքի այն կողմը, որին մարդը, իր ազատության շնորհիվ, չի ցանկանում հաղորդակից դարձնել ուրիշներին: Դա մարդու կյանքի այն մասն է, որն անձեռնմխելի է շրջապատի համար: Այն արտացոլում է ամեն մի մարդու բնական ձգտումը՝ ունենալու իր ինտիմ և գործարար հետաքրքրությունների անձնական աշխարհը, որը հեռու լինի ուրիշների միջամտությունից: (...) Մարդու անձնական կյանքի իրավունքը յուրաքանչյուր անհատի արտահայտման և անհատականության պաշտպանության իրավունքն է:»:[3]

Միաժամանակ, գիտության և տեխնոլոգիայի զարգացմանը, հատկապես՝ համացանցի տարածմանը զուգընթաց մարդու իրավունքները, այդ թվում՝ անձնական կյանքի գաղտնիության իրավունքը, սկսել են լայնորեն արտացոլվել առցանց տիրույթում՝ ձեռք բերելով նոր առանձնահատկություններ՝ հասանելիության հնարավորություն առանց տարածության և ժամանակի սահմանափակման: Մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքն առցանց հարթակում կարող է արտահայտվել որպես, օրինակ, էլեկտրոնային գաղտնիության իրավունք (Electronic Privacy), թվային գաղտնիության իրավունք (Digital Privacy), ինչպես նաև առցանց անանունության իրավունք (Right to Anonymity կամ Right to Online Anonymity):

Վերոնշյալ տարբեր եզրույթներ կարող են բովանդակային իմաստով որոշակիորեն տարբերվել իրարից. օրինակ, մի տերմինաբանությամբ առցանց գաղտնիության իրավունքը կարող է ներառել նույնականացվող (ոչ անանուն) մարդուն պատկանող տեղեկությունների անձեռնմխելիությունը, մեկ այլ դեպքում հենց մարդու անանունությունը:

Մարդու ինքնության բացահայտումը և նույնականացման հնարավորություններն ուղղակիորեն կապված են անձնական տվյալների հետ: 2012 թվականին Հայաստանը վավերացրել է «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիան (108 կոնվենցիա),[4] որի

---

[1] Այս վերլուծությունում այսուհետ առավելապես կկիրառենք «անձնական կյանքի գաղտնիություն» կամ «անձնական կյանքի անձեռնմխելիություն» եզրույթները՝ նկատի ունենալով, որ առավելապես խոսք է գնալու հենց անհատի՝ իր անձնական կյանքն այլ անձնացից գաղտնի պահելու իրավունքի (right to privacy) և հնարավորությունների մասին:

[2] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 12, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1896 ,
Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 17, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18500 ,
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 8, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81165 ,
ՀՀ Սահմանադրություն, հոդված 31, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

[3] ՀՀ Սահմանադրության գիտագործնական մեկնաբանությունների ժողովածու, 2010թ., էջ 276-277

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80554

համաձայն՝ անձնական տվյալ է ինքնությունը հաստատված և ինքնությունը հաստատման ենթակա անհատների վերաբերյալ ցանկացած տեղեկություն («personal data» means any information relating to an identified or identifiable individual («data subject»):[5] Նույն հասկացությունը պահպանվել է նաև «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիան փոփոխող արձանագրությունում (108+ կոնվենցիա),[6] որը Հայաստանը վավերացրել է 2021 թվականի նոյեմբերի 26-ին ուժի մեջ մտած օրենքով:[7] 2015 թվականին ընդունվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,[8] որի համաձայն՝ անձնական տվյալ է ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:[9] ԱՏՊ օրենքի այս հասկացությունը ըստ էության համադրելի է 108+ կոնվենցիայում անձնական տվյալի հասկացությանը:

Միաժամանակ, 108+ կոնվենցիայի բացատրական զեկույցում[10] նշվում է, որ տվյալները պետք է անանուն համարվեն միայն այնքան ժամանակ, քանի դեռ անհնար է կրկին նույնականացնել տվյալների սուբյեկտին, կամ եթե նման վերանույնականացումը կպահանջի անհիմն ժամանակ, ջանք կամ ռեսուրսներ՝ հաշվի առնելով տվալների մշակման պահին առկա տեխնոլոգիաները և տեխնոլոգիական զարգացումները:[11]

ԱՏՊ օրենքում անանունության ապահովումը (anonymisation՝ անանունացում) կոչվում է ապանձնավորում և սահմանվում է որպես գործողություններ, որոնց արդյունքում հնարավոր չէ որոշել տվյալների պատկանելությունը կոնկրետ տվյալների սուբյեկտին:[12]

Վերոնշյալի համատեքստում՝ այս վերլուծության մեջ նշելով առցանց անանունության մասին՝ նկատի ունենք առցանց միջավայրում անձի՝ առանց իրեն նույնականացնող տվյալների հանդես գալու հնարավորությունը:

Արդյունքում, եթե ամփոփ, ապա այս վերլուծության առարկան առցանց միջավայրում անանուն (չնույնականացված) մնալու մարդու հնարավորության սահմաններն են ՀՀ օրենսդրությունում, ինչն իր հերթին անձնական կյանքի գաղտնիության իրավունքի դրսևորումներից մեկն է առցանց միջավայրում:

Պետք է նկատի ունենալ, որ որպես մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքի դրսևորում՝ առցանց անանունությունը սերտորեն կապված է մարդու մեկ այլ կոնվենցիոն և սահմանադրական իրավունքի՝ արտահայտվելու ազատության հետ:[13] Սա յուրաքանչյուրի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքն է և ներառում է

---

[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80554 , Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիա, հոդված 2

[6] http://www.parliament.am/draft_docs7/K-947lr_ardzanagrutyun.pdf

[7] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=157879

[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175814

[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175814 , «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 1

[10] https://www.europarl.europa.eu/meetdocs/2014_2019/plmrep/COMMITTEES/LIBE/DV/2018/09-10/Convention_108_EN.pdf , էջ 15

[11] https://www.europarl.europa.eu/meetdocs/2014_2019/plmrep/COMMITTEES/LIBE/DV/2018/09-10/Convention_108_EN.pdf , էջ 17, կետ 19

[12] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175814 , «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 9

[13] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 19, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1896 , Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 19, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18500 , Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 10, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81165

սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:[14] Առցանց անանունությանը (ինչպես անանունությունն ընդհանրապես) հանդես է գալիս որպես արտահայտվելու ազատության երաշխիք, իսկ անանունության բացակայությունն ըստ այդմ կաշկանդում է արտահայտվելու ազատությունը:

Ամբողջ վերոնշյալի համատեքստում այս վերլուծության հիմքում անձնական կյանքի անձեռնմխելիության կոնվենցիոն և սահմանադրական իրավունքից բխող այն պնդումն է, որ յուրաքանչյուր ոք ունի առցանց անանունության իրավունք:[15]

[14] ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723
[15] Այս իրավունքի ճանաչման օրինակները և իրավունքի սահմանները ներկայացված են հաջորդիվ

Առցանց անանունության ճանաչման օրինակներ միջազգային իրավունքում

Առցանց անանունության կարևորությունն ինչպես անձնական կյանքի գաղտնիության իրավունքի, այնպես էլ արտահայտվելու ազատության տեսանկյունից վաղուց ճանաչված է. օրինակ, Article 19 (Արթիքլ 19) միջազգային կազմակերպությունը, որի նպատակն է խթանել խոսքի/արտահայտվելու ազատությունը այդ թվում միջազգային մակարդակում (կազմակերպության անվանումը հղում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի՝ արտահայտվելու ազատությունը սահմանող 19-րդ հոդվածին), դեռևս 2015 թվականին է իրականացրել առցանց անանունության իրավունքի վերաբերյալ վերլուծություն (policy brief)՝ արձանագրելով, որ անանունության պաշտպանությունը ինչպես խոսքի ազատության, այնպես էլ գաղտնիության իրավունքի պաշտպանության կենսական բաղադրիչ է:[16]

Առցանց անանունության հարցը դարձել է նաև ՄԱԿ-ի՝ Խոսքի և կարծիքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի զեկույցի առարկա (A/HRC/29/32. Զեկույց գաղտնագրման, անանունության և մարդու իրավունքների շրջանակի մասին):[17] Զեկույցը երկու հիմնական հարց է բարձրացնում՝ նախ՝ գաղտնիության և արտահայտվելու ազատության իրավունքները պաշտպանու՞մ են արդյոք անվտանգ առցանց հաղորդակցությունը, մասնավորապես գաղտնագրման կամ անանունության միջոցով: Երկրորդ, ենթադրելով առաջին հարցի դրական պատասխան՝ որքանո՞վ կարող են պետությունները մարդու իրավունքների շրջանակում սահմանել անանունության սահմանափակումներ:[18] Համադրելի վերլուծությունների արդյունքում Հատուկ զեկուցողը գտել էր, որ գաղտնագրումը և անանունությունը և դրանց հիմքում ընկած անվտանգության հայեցակարգերը ապահովում են այնպիսի գաղտնիություն և անվտանգություն, որն անհրաժեշտ է թվային դարաշրջանում կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման համար: Հատուկ զեկուցողը նաև նշել էր, որ նման անվտանգությունը կարող է էական նշանակություն ունենալ այլ իրավունքների իրականացման համար:[19] Համարելով, որ կարծիքի և արտահայտման ազատության իրավունքների համար իրենց կարևորության պատճառով գաղտնագրման և անանունության սահմանափակումներն ինքնին պետք է խստորեն սահմանափակվեն օրինականության (legality), անհրաժեշտության (necessity), համաչափության (proportionality) և իրավաչափության (legitimacy) սկզբունքների համաձայն՝ Հատուկ զեկուցողը ի թիվս այլնի նշել է, որ պետությունները գաղտնագրման և անանունության հետ կապված պետք է որդեգրեն չսահմանափակման կամ համապարփակ պաշտպանության քաղաքականություն, ընդունեն սահմանափակումներ միայն կոնկրետ դեպքերի հիման վրա, երբ այդ սահմանափակումները օբյեկտիվորեն բավարարում են օրինականության, անհրաժեշտության, համաչափության և իրավաչափության սկզբունքների պահանջներին:[20] Հատուկ զեկուցողը նաև գտել է, որ

---

[16] https://www.article19.org/data/files/medialibrary/38006/Anonymity_and_encryption_report_A5_final-web.pdf , էջ 1

[17] https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/095/85/PDF/G1509585.pdf?OpenElement

[18] https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/095/85/PDF/G1509585.pdf?OpenElement , A/HRC/29/32. Զեկույց գաղտնագրման, անանունության և մարդու իրավունքների շրջանակի մասին, էջ 3, կետ 3

[19] https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/095/85/PDF/G1509585.pdf?OpenElement , A/HRC/29/32. Զեկույց գաղտնագրման, անանունության և մարդու իրավունքների շրջանակի մասին, էջ 19, կետ 56

[20] https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/095/85/PDF/G1509585.pdf?OpenElement , A/HRC/29/32. Զեկույց գաղտնագրման, անանունության և մարդու իրավունքների շրջանակի մասին, էջ 19, կետ 57

պետությունները պետք է խթանեն գաղտնագրումը և անանունությունը, իսկ ներպետական օրենքները պետք է ընդունեն, որ անհատներն ազատ են պաշտպանելու իրենց թվային հաղորդակցության գաղտնիությունը՝ օգտագործելով գաղտնագրման տեխնոլոգիան և գործիքները, որոնք ապահովում են առցանց անանունությունը:[21]

Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցողը (The Special Rapporteur on Freedom of Expression of the Inter-American Commission on Human Rights) իր մամուլի հաղորդագրություններից մեկով արձանագրել էր, որ արտահայտման ազատությունը և անձնական կյանքի գաղտնիությունը պաշտպանում են անանուն խոսքը կառավարության սահմանափակումներից:[22]

Պետության հետ հարաբերություններում անանուն հանդես գալու վերաբերյալ կարգավորումներ առկա են «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիայում[23] որը Հայաստանը վավերացրել է 2022 թվականի մարտի 23-ին ուժի մեջ մտած օրենքով:[24]

Մասնավորապես, Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Կոնվենցիայի կողմերը կարող են տեղեկություն ստանալու հարցում ներկայացնողներին անանուն մնալու իրավունք ընձեռել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հարցմամբ դիմողի ինքնության բացահայտումը կարևոր է հարցմանն ընթացք տալու համար:[25]

Կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանության 42-րդ կետում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ նշվում է, որ Կոնվենցիայի այս դրույթը թեև չի պարտադրում, սակայն խրախուսում է անանուն հարցումներ ներկայացնելու հնարավորություն սահմանելը:[26]

Առցանց անանունության իրավունքին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Standard Verlagsgesellschaft mbH v. Austria (no. 3) գործով կայացրած որոշմամբ[27] ՄԻԵԴ-ը գտել էր, որ ավստրիական դատարանները խախտել են դիմումատուի խոսքի ազատության իրավունքը՝ պահանջելով դիմումատուից բացահայտել այն անձանց ինքնությունը, ովքեր իբր զրպարտչական մեկնաբանություններ են տեղադրել դիմումատուի կայքում:

Դիմումատուն Վիեննայում գտնվող կազմակերպություն էր, որը օրաթերթ էր հրապարակում ինչպես տպագիր տարբերակով (Der Standard), այնպես էլ էլեկտրոնային եղանակով (derStandard.at կայք): Դիմումատուն հնարավորություն էր տալիս կայքի օգտատերերին առցանց հրապարակված նյութերի վերջում թողնել անանուն մեկնաբանություններ: Միաժամանակ, գրանցվելիս օգտատերերը լրացնում էին իրենց անունը, ազգանունը և էլեկտրոնային փոստի հասցեն, ըստ ցանկության օգտատերերը կարող էին լրացնել նաև ֆիզիկական փոստի հասցե, սակայն տեղեկացվում էին, որ իրենց տվյալները հրապարակայնորեն չեն երևա: Մյուս կողմից, օգտատերերն ընդունում էին կայքի օգտագործման ընդհանուր դրույթները և պայմանները, այդ թվում

[21] https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/095/85/PDF/G1509585.pdf?OpenElement , A/HRC/29/32. Զեկույց գաղտնագրման, անանունության և մարդու իրավունքների շրջանակի մասին, էջ 20, կետ 59

[22] https://www.oas.org/en/iachr/expression/showarticle.asp?artID=979&lID=1 , մամուլի հաղորդագրություն R17/15,

[23] http://www.parliament.am/law_docs_8/280322HO68_konventcia.pdf

[24] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161489

[25] http://www.parliament.am/law_docs_8/280322HO68_konventcia.pdf , էջ 5, հոդված 4, մաս 2

[26] Council of Europe Convention on Access to Official Documents, Explanatory Report, http://www.foi.am/u_files/file/legislation/EuropeConventioneng.pdf, էջ 7, կետ 42

[27] https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-213914%22]}

վիրավորանքների, սպառնալիքների կամ չարաշահումները, ինչպես նաև զրպարտչական կամ գործարար համբավին վնաս պատճառող հայտարարությունների անընդունելիությունը և տեղեկացվում էին, որ իրենց տվյալները կարող են բացահայտվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Standard Verlagsgesellschaft mbH v. Austria (no. 3) գործի հիմքում այն էր, որ 2012 և 2013 թվականներին derStandard.at կայք կայքում հրապարակված նյութերի հերոսներ Կ.Ս.-ն (K.S.) և Հ.Կ.-ն (H.K.), համարելով, որ նշված նյութերի որոշ մեկնաբանություններ իրենց հասցեին զրպարտություն են պարունակում, մեկնաբանություն թողած անձանց դեմ համապատասխան հայց ներկայացնելու համար պահանջել էին լրատվամիջոցից բացահայտել մեկնաբանություններ թողած անձանց ինքնությունը: Ավստիրայի դատարանները նախ մերժել էին Կ.Ս.-ի և Հ.Կ.-ի պահանջը, սակայն, բողոքարկման արդյունքում ի վերջո լրատվամիջոցին պարտավորեցրել էին բացահայտել մեկնաբանություն թողած անձանց ինքնությունը:

Արդյունքում, լրատվական կայքում մեկնաբանություն թողած օգտատերերի ինքության բացահայտման հարցը դարձել էր ՄԻԵԴ-ի քննարկման առարկա: Standard Verlagsgesellschaft mbH v. Austria (no. 3) գործով ՄԻԵԴ-ի կայացրած որոշումը կարող է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված արտահայտվելու ազատության իրավունքի շուրջ քննարկումների առարկա դառնալ, ինչը որոշակիորեն դուրս է այս վերլուծության առարկայից, սակայն էական է, որ ՄԻԵԴ-ի որոշմամբ ըստ էության արձանագրվել է արտահայտվելու ազատության համատեքստում առցանց անանունության կարևորությունը:

Բացի այդ, շադրության է արժանի նաև այն, որ թեև դիմումատուն լրատվություն տարածող կազմակերպություն էր, սակայն լրատվական կայքում մեկնաբանություններ թողած անձանց ինքնության բացահայտում անհիմն համարելը ՄԻԵԴ-ը չի դիտարկել տեղեկատվության (լրագրողական) աղբյուրի գաղտնիության համատեքստում. այսպես, ՄԻԵԴ-ը առցանց մեկնաբանությունների հեղինակներին լրագրողական աղբյուրներ չի համարել, սակայն անհիմն է համարել Ավստրիայի դատարանների որոշումները, որոնք պարտադրում էին դիմումատուին բացահայտել անանուն մեկնաբանություններ թողած իր օգտատերերի ինքնությունը: ՄԻԵԴ-ը նաև նշել է, որ անանունության բացարձակ իրավունք չկա, ու թեև անանունությունը կարևոր արժեք է, այն պետք է հավասարակշռված լինի հակադրվող այլ իրավունքների և շահերի հետ:

Վերոնշյալն ամփոփելով՝ կարելի է առանձնացնել հետևյալ արձանագրումները, որոնք վերաբերելի են լինելու սույն վերլուծությանը.

- անանունության իրավունքն անձնական կյանքի գաղտնիության հիմնարար իրավունքի դրսևորում է և արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքի երաշխիք. անանունության իրավունքին միջամտությունը կարող է հանգեցնել անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտման և զսպող (սառեցնող) ազդեցություն (chilling effect) ունենալ արտահայտվելու ազատության համար,

- անձնական կյանքի գաղտնիության իրավունքը և արտահայտվելու ազատությունը հիմնարար, համընդհանուր իրավունքներ են,

- անձնական կյանքի գաղտնիության իրավունքի և արտահայտվելու ազատության և դրանցից ածանցվող անանունության իրավունքի նկատմամբ հարգանքը և դրանց ապահովումը պետք է իրականացվի անկախ միջավայրից՝ այդ թվում՝ առցանց,

- առցանց անանունության իրավունքի սահմանափակումները կաշկանդված են օրինականության, անհրաժեշտության, համաչափության և իրավաչափության սկզբունքներով:

Նպատակը

Այս վերլուծության նպատակը առավել հստակ ներկայացնելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

- ի՞նչը - ինչպես նախանշել ենք վերևում՝ այս վերլուծության առարկան առցանց միջավայրում անանուն (չնույնականացված) մնալու մարդու հնարավորության սահմաններն են ՀՀ օրենսդրությունում, ուստի տվյալ դեպքում քննարկման է ենթակա անանունությունն առցանց միջավայրում,

- ու՞մ - տվյալ դեպքում խոսք է գնում անհատի՝ ֆիզիկական անձանց՝ մարդկանց մասին: Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածու նախատեսում է, որ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ,

- ումի՞ց - այս վերլուծության համատեքստում քննարկման է ենթակա առցանց միջավայրում անանուն (չնույնականացված) մնալու մարդու հնարավորությունը պետությունից՝ լայն իմաստով՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված մարմիններից և պաշտոնատար անձանցից, ներառյալ՝ այն կազմակերպություններից և անձանցից, ում միջոցով պետական մարմինները կարող են իրականացնել իրենց պետաիշխանական լիազորությունները:

Արդյունքում՝ այս վերլուծության նպատակն է պարզել Հայաստանում առցանց միջավայրում անանունության իրավունքի վիճակը, ներառյալ՝ անանուն (պետության կողմից չնույնականացված) մնալու մարդու հնարավորության սահմանները և ըստ արձանագրված խնդիրների՝ տալ համապատասխան խորհրդատվականներ (recommendations):

Մեթոդաբանությունը

Հաշվի առնելով այս վերլուծության նպատակը՝ Հայաստանում առցանց միջավայրում անանունության իրավունքի վիճակը, ներառյալ՝ անանուն (պետության կողմից չնույնականացված) մնալու մարդու հնարավորության սահմանները պարզելու համար իրականացվել է ներպետական օրենսդրության ուսումնասիրություն:

Ընդ որում, նախ ուսումնասիրվել է առցանց անանունության իրավունքին առնչվող (սահմանող կամ բացառող) ընդհանուր կարգավորումների առկայությունը, որը ենթադրում է ոչ թե կոնկրետ իրավահարաբերությունում, այլ առհասարակ առցանց միջավայրում պետության անընդհատ և ըստ էության անսահմանափակ վերահսկողությունից զերծ մնալու հնարավորությունները՝ անկախ նրանից առանձին դեպքերում հնարավոր է անանունության ապահովում, թե՝ ոչ:

Այդուհետ, ուսումնասիրվել են կոնկրետ իրավահարաբերությունում անանունության իրավունքին առնչվող կարգավորումների օրինակներ, ինչպես գործող օրենսդրությունում, այնպես էլ չընդունված օրենսդրական նախաձեռնություններում:

Օրենսդրությունում առցանց անանունության վերաբերյալ կարգավորումները որոնվել են պարզ (առանց հատուկ ծրագրերի) որոնմամբ՝ մասնավորապես անհրաժեշտ տեղեկությունը փնտրվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում (arlis.am կամ laws.am) այնպիսի իրավական ակտերում և այնպիսի բանալի բառերով, որոնք ողջամտորեն փոխկապակցված կարող են լինել առցանց անանունության իրավունքին (օրինակ, տարբեր հոդվածներով՝ «անանուն», «անանունություն», «անձնական կյանք», «անձնական կյանքի գաղտնիություն», «տեղեկատվության ազատություն» և նման այլ բառեր):

Առանձին ուսումնասիրվել են անձնական կյանքի գաղտնիության և տեղեկատվության ազատության իրավունքներին առնչվող ընդհանուր կարգավորումները՝ Սահմանդրությունը, Քաղաքացիական և Քրեական օրենսգրքերը, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքները: Այս իրավական ակտերի վերլուծության հիման վրա կատարվել է համապատասխան եզրահանգում առցանց անանունության իրավունքի ընդհանուր կարգավորման առկայության/բացակայության մասին:

Ուսումնասիրվել են ոլորտային օրենքներ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են անանունության իրավունքին: Մասնավորապես, ուսումնասիրությունում առանձին ներկայացված են Քրեական դատավարության օրենսգիրքը, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը, «Զանգվածային լրատվության մասին» օրենքը և «Ազդարարման համակարգի մասին» օրենքը: Այս իրավական ակտերի վերլուծության հիման վրա նույնպես կատարվել է համապատասխան եզրահանգում առցանց անանունության իրավունքի կոնկրետ կարգավորումների պատշաճության մասին:

Եզրահանգումները պարունակում են միայն բովանդակային գնահատականներ: Եզրահանգումների հիման վրա վերլուծությամբ ներկայացվել են արձանագրված խնդիրների վերաբերյալ խորհրդատվականներ, որոնց հասցեատերերն են կառավարությունը, օրենսդիր մարմինը (պատգամավորները) և քաղաքացիական հասարակությունը:

Վերլուծությունում իրավական կարգավորումների զուգընթաց ներկայացվել է նաև վերաբերելի դատական և վարչական պրակտիկան:

Վերլուծության համար որպես ուղենիշ է ծառայել միջազգային լավագույն փորձը, մասնավորապես, դրանից բխող այն արձանագրումները, որ արվել են սույն վերլուծության «Առցանց անանունության ճանաչման օրինակներ միջազգային իրավունքում» բաժնի վերջում:

Առկա վիճակը

Մինչև առցանց անանունության իրավունքի հետ կապված խնդիրներին անդրադառնալը և դրանց լուծման առաջարկություններ ներկայացնելը նախ անհրաժեշտ է համապարփակ պատկերացում կազմել առցանց անանունության օրենսդրական և գործնական կարգավորումների, ընթացիկ վիճակի վերաբերյալ:

Այս վերլուծության նախաբանում և «Առցանց անանունության ճանաչման օրինակներ միջազգային իրավունքում» բաժնում արդեն ներկայացվել են Հայաստանը վավերացրած այն հիմնական միջազգային փաստաթղթերը, որոնք ամրագրում են մարդու անձնական կյանքի գաղտնիության և արտահայտվելու ազատության իրավունքները և որոնց մեկնաբանությունների շրջանակում ճանաչվել է նաև առցանց անանունության իրավունքը: Ուստի, վերլուծության այս բաժնում դրանք առանձին չենք ներկայացնի, դրանց կանդրադառնանք ըստ անհրաժեշտության:

Ընդհանուր կարգավորումը

Հայաստանում չկա մարդու առցանց վարքագիծը կարգավորող, այդ թվում՝ առցանց անանունության իրավունքն ուղղակիորեն սահմանող առանձին օրենք: Արդյունքում, առցանց անանունության իրավունքի առկայության կամ բացակայության գնահատականը տալու համար անհրաժեշտ է անդրադառնալ անձնական կյանքի գաղտնիության և տեղեկատվության ազատության իրավունքներին առնչվող ընդհանուր կարգավորումներին: Այսպես.

Սահմանադրությունը[28]

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է ինչպես մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, այնպես էլ արտահայտվելու ազատությունը, սահմանում է այդ իրավունքների սահմանափակումներիսահմանափակումները (իրավունքի սահմանափակման կիրառման պարտադիր պայմանները, սկզբունքները):

Այսպես, Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք: 2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք: 2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: 3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է

[28] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723 , հոդվածներ 31, 33, 42 և 78

սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:»:

Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: 2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ: (...) 5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:»:

Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: (...) 3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Սահմանադրության 78-րդ հոդվածը սահմանում է համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:»:

Քաղաքացիական օրենսգիրքը[29]

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն անձնական կյանքի գաղտնիությունը սահմանում է որպես ոչ նյութական բարիք[30] և իրավունք է տալիս մարդուն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե հաստատվի, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ ի թիվս այլնի նաև անձնական կյանքը հարգելու իրավունքը:[31]

Քաղաքացիական օրենսգիրքն անանունության մասին նշում է միայն հեղինակային իրավունքի համատեքստում (անանուն ստեղծագործությունների մասին դրույթներում):

Որևէ այլ նշում, այդ թվում՝ առցանց անանունության վերաբերյալ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում:

---

[29] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172116

[30] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172116 , ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 162

[31] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172116 , ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 162.1

Քրեական օրենսգիրքը[32]

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում մարդու անձնական գաղտնիք համարվող տեղեկությունն առանց նրա համաձայնության օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու կամ այդ տեղեկությունն օրենքով սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու նպատակով ձեռք բերելու կամ պահելու համար:[33]

Քրեական օրենսգրքի առանձին գլուխ վերաբերում է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններին:[34] Այս դեպքում, սակայն, առավելապես խոսք է գնում կիբեռհանցագործություններին մասին:

Քրեական օրենսգրքում որևէ այլ նշում, այդ թվում՝ առցանց անանունության վերաբերյալ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը[35]

ԱՏՊ օրենքը կարգավորում է պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:[36] Որպես անձնական տվյալների մշակումը կարգավորող ընդհանուր իրավական ակտ՝ ԱՏՊ օրենքն ինքնին չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հրապարակումը, ինչպես նաև չի սահմանում այս կամ այն անձնական տվյալների՝ գաղտնիք լինելու կարգավիճակը: Նման դիրքորոշում հայտնել է ԱՏՊ օրենքի հիման վրա գործող անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը (Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը) N-006/01/19 վարչական գործով կայացրած որոշմամբ: Նույն որոշմամբ ԱՏՊ լիազոր մարմինը նշել էր, որ որոշակի հարաբերությունները կամ կոնկրետ մարմնի գործունեությունը կամ կոնկրետ իրավահարաբերությունը կարագավորող օրենքներով կարող են ուղղակորեն սահմանվել այս կամ այն անձնական տվյալի փոխանցման (այդ թվում՝ հրապարակման) թույլտվություն կամ արգելք:[37]

Ինչպես նշել ենք սույն վերլուծության նախաբանում՝ ԱՏՊ օրենքում անանունության ապահովումը (anonymisation՝ անանունացում) կոչվում է ապանձնավորում,[38] սակայն անձնական տվյալների ապանձնավորումը ԱՏՊ օրենքում ներկայացված է որպես անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքի բաղադրիչ. այսպես, ԱՏՊ օրենքը տվյալներ մշակողի համար սահմանում է անձնական տվյալների մշակման արգելք, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով:[39]

---

[32] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176079
[33] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176079 , ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 204
[34] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176079 , ՀՀ քրեական օրենսգիրք գլուխ 38, հոդվածներ 359-365
[35] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175814
[36] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175814 , «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 1
[37] http://www.foi.am/u_files/file/Voroshum_2019_qaghaqapetaran.pdf , էջ 9-10, կետ 46
[38] Տես՝ այս վերլուծության էջ 6
[39] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175814 , «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 4

ԱՏՊ օրենքն ուղղակիորեն չի անդրադառնում առցանց անանունությանը, սակայն անձնական տվյալների մշակում է համարում անձնական տվյալների հետ կատարվող ցանկացած գործողություն՝ անկախ իրականացման ձևից և եղանակից, այդ թվում՝ ավտոմատացված: Բացի այդ, ԱՏՊ օրենքն անձնական տվյալները երրորդ անձանց փոխանցել է համարում ի թիվս այլնի անձնական տվյալները տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը:[40]

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը[41]

Արտահայտվելու ազատության անբաժան մաս է տեղեկատվության ազատությունը՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը: Հայաստանում 2003 թվականից գործում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, որը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները և ի թիվս այլնի սահմանում է տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները:

ՏԱ օրենքը նախատեսում է տեղեկությունների ինչպես պրոակտիվ (տեղեկություն տնօրինողի կողմից սեփական նախաձեռնությամբ), այնպես էլ տղեկություն փնտրողի հարցման հիման վրա տեղեկություն տրամադրելու կարգը և պայմանները: Տեղեկություն ստանալու հարցում ներկայացնելու կարգը, սակայն, չի նախատեսում անանուն հարցումներ ներկայացնելու հնարավորություն: Մասնավորապես, ՏԱ օրենքը սահմանում է, որ տեղեկություն ստանալու գրավոր հարցման մեջ պետք է նշվեն դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Բացի այդ, գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի:[42] Ընդ որում, գրավոր հարցմանը պատասխան չի տրվում (այսինքն գրավոր հարցումն ըստ էության կարող է թողնվել անարձագանք), եթե այն չի պարունակում վերոնշյալ բոլոր տվյալները:[43]

Տեղեկություն ստանալու հարցումներ կարող են ներկայացվել նաև առցանց՝ էլեկտրոնային հարցումների միասնական request.am հարթակի միջոցով:[44] Այս հարթակով հարցում հնարավոր է ուղարկել նաև առանց այն ստորագրելու: Սակայն, հարթակն օգտագործելու և դրանով հարցում ուղարկելու համար անհրաժեշտ է նախ գրանցվել հարթակում, իսկ գրանցվելիս անհրաժեշտ է լրացնել անուն, ազգանուն, ծննդյան թիվ, անձնագրային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե և հեռախոսահամար: Արդյունքում, անգամ անստորագիր հարցում ուղարկելու դեպքում էլեկտրոնային հարցման մեջ ինքնաշխատ ձևով արտացոլվում են ոչ միայն ՏԱ օրենքով սահմանված դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը և հասցեն, այլ նաև հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

ՏԱ օրենքով անանուն հարցումներ ներկայացնելու հնարավորության բացակայության հարցը պարբերաբար բարձրացվել է քաղաքացիական հասարակության կողմից: Մասնավորապես, դեռևս 2016 թվականին ՔՀԿ-ների ներգրավմամբ մշակվել էր տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգ, որում, ի թիվս այլնի, բարձրացվել էր հարցմամբ դիմելու յուրաքանչյուրի իրավունքի ապահովումը: Այդ

---

[40] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175814 , «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1, կետեր 2 և 3

[41] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175858

[42] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175858 , «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1

[43] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175858 , «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 3

[44] https://e-request.am/hy

համատեքստում հայեցակարգը նշում էր, որ ՏԱ օրենքի՝ հարցմամբ դիմողի մասին տվյալներ պահանջող դրույթն անհարկի ձևական պահանջներ է նախատեսում անձանց համար՝ տեղեկատվության ազատության ապահովման բնագավառում իրենց իրավունքներն իրացնելու հետ կապված:[45] Որպես լուծում՝ հայեցակարգն առաջարկում էր հարցմանը ներկայացվող պարտադիր պահանջների շարքից հանել քաղաքացիության նշման և ստորագրության առկայության հետ կապված դրույթները: Հայեցակարգը և դրա արդյունքնում ՏԱ օրենքի բարեփոխումներն արդյունքում չընդունվեցին՝ քաղաքացիական հասարակության և պետական մարմինների միջև ՏԱ օրենքի արդիականացված տարբերակի շուրջ կոնսենսուսի բացակայության պատճառով:

ՏԱ օրենքով անանուն հարցումներ ներկայացնելու հնարավորության բացակայության հարցը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների[46] առաջարկությամբ քննարկվեց նաև 2020 թվականին: Արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվեց ՏԱ օրենքում փոփոխության նախագիծ, որով առաջարկվում էր ՏԱ օրենքով սահմանել, որ գրավոր հարցման մեջ նշվում են միայն դիմողի անունը, ազգանունը, ինչպես նաև փոստային կամ էլեկտրոնային փոստի հասցեն:[47] Այս անգամ ՏԱ օրենքում նման փոփոխության հիմքում ի թիվս այլնի դրվել էր նաև «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիայով անանուն հարցումներ ներկայացնելու հնարավորություն սահմանելու խրախուսանքի հիմնավորումը,[48] իսկ հարցման մեջ անուն և ազգանուն նշելու պայմանը քաղաքացիության, ստորագրության և կոնկրետ բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն նշելու պահանջների բացակայության պայմաններում ծառայելու էր բացառապես դիմողի հետ գրագրության պատշաճությանը (գրագրության էթիկային)՝ առանց անգամ հնարավորություն տալու տեղեկություն տնօրինողին անհրաժեշտության դեպքում պարզել՝ արդյոք դիմողը հանդես է եկել իր իրական անուն ազգանունով, թե՝ ոչ: Տեղեկատվության ազատության ոլորտում անանունության ապահովմանն ուղղված այս նախաձեռնությունը նույնպես ավարտին չհասավ:[49]

Եզրահանգում

- Ինչպես նշվեց՝ Հայաստանում չկա առցանց անանունության իրավունքն ուղղակիորեն սահմանող առանձին օրենք: Առցանց անանունության իրավունքն ուղղակիորեն (նման անվանմամբ) սահմանված չէ նաև անձնական կյանքի գաղտնիության և արտահայտվելու ազատության իրավունքներին առնչվող ընդհանուր իրավական ակտերում: Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրությունը անձնական կյանքի գաղտնիության և արտահայտվելու ազատության իրավունքների իրացումը չի պայմանավորում կոնկրետ հարթակով՝ տարածությամբ կամ վայրով:

[45] https://www.moj.am/legal/view/article/969 , Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգ, 2-րդ բաժին, կետ 2

[46] Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ

[47] https://www.e-draft.am/projects/2489/about , «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ

[48] https://www.e-draft.am/projects/2489/justification , «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի հիմնավորում («Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» ԵԽ կոնվենցիան այդ ժամանակ գտնվում էր Հայաստանի կողմից ստորագրման և վավերացման գործընթացքում)

[49] Որևէ պաշտոնական պազրաբանում նախագիծը մշակող ՀՀ արդարադատության նախարարության կողմից չի եղել, սակայն ենթադրաբար նախագծի ընդունումն առկախելու պատճառը 2020 թվականի ընթացքում կորոնավիրուսի համավարակի և 4-օրյա պատերազմի արդյունքում Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներն են եղել:

Արդյունքում, ՀՀ օրենսդրությունը ընդհանուր առմամբ չի սահմանափակում մարդու՝ առցանց միջավայրում պետության անընդհատ և ըստ էության անսահմանափակ վերահսկողությունից զերծ մնալու հնարավորությունը՝ անկախ նրանից առանձին դեպքերում հնարավոր է անանունության ապահովում, թե՝ ոչ: Թեև ՀՀ Սահմանադրությունը, ինչպես և վերլուծության մեջ վկայակոչված միջազգային պայմանագրերը, ուղղակիորեն չեն սահմանում առցանց անանունության իրավունքը, սակայն ՀՀ Սահմանադրության և ըստ այդմ անձնական կյանքի գաղտնիության և արտահայտվելու ազատության իրավունքներին առնչվող այլ իրավական ակտերի իրավազորության շրջանակում յուրաքանչյուր ոք օգտվում է ինչպես անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքից, այնպես էլ արտահայտվելու ազատությունից, ներառյալ՝ դրանցից բխող անանունության իրավունքից այդ թվում՝ առցանց: **Ըստ այդմ, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի համատեքստում յուրաքանչյուր ոք ունի առցանց անանունության իրավունք, և այդ իրավունքը սահմանափման է ենթակա միայն օրենքով՝ սահմանադրութամբ նախատեսված նպատակների առկայությամբ և համաչափության սկզբունքի պահպանմամբ:**

- Որպես արտահայտվելու ազատության երաշխիք՝ տեղեկատվության ազատության ոլորտում անանուն հանդես գալու իրավունքը պատշաճ արտացոլված չէ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, ՏԱ օրենքով հարցմանը ներկայացվող պահանջները չեն արտացոլում անանունության իրավունքի միջազգային լավագույն փորձը:

Կոնկրետ կարգավորման օրինակներ

Թեև Հայաստանում չկա առցանց անանունության իրավունքն ուղղակիորեն սահմանող կամ բացառող առանձին օրենք, սակայն կան օրինակներ, երբ ոլորտային օրենքներով կոնկրետ դեպքերում երաշխավորվում կամ հակառակը՝ սահմանափակվում է առցանց անանունության հնարավորությունը:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը[50]

Առցանց անանունությունը և անձնական կյանքի անձեռնմխելիության ապահովումն առցանց տիրույթում մեծապես կախված է առցանց տարբեր ծառայություններ[51] մատուցողներից, որոնք ծառայությունների մատուցման շրջանակում մշակում են հաճախորդի անձնական տվյալները, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողներից, որոնք հաճախորդների անձնական տվյալներին առնչվում են էլեկտրոնային հաղորդակցության, այդ թվում՝ ինտերնետային ծառայություն մատուցելու շրջանակներում: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ առցանց միջավայրում տաբեր ծառայություններից օգտվելու համար այսպես թե այնպես անհրաժեշտ է նախ ստանալ էլեկտրոնային հաղորդակցության, մասնավորապես՝

[50] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172158

[51] Առցանց ծառայություններ ասելով նկատի ունենք ոչ միայն ծառայության կամ ապրանիք առաջարկ, այլ լայն իմաստով նաև մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարմանը, հանգստին, ժամանցին, սոցիակալան շփումներին, գիտական, գրական, գեղարվեստական, տեղեկատվական պահանջմունքների, հետաքրքրությունների և հետաքրքրասիրության բավարարմանն ուղղված առցանց ծառայությունները և այլն. այլ կերպ ասած՝ առցանց առաջարկվող ցանկացած բան, բացի էլեկտրոնային հաղորդակցության (ինտերնետային) այն ծառայությունից, որը ստացվում է ի սկզբանե առցանց հասանելիության համար

ինտերնետային ծառայություն: Ընդ որում, եթե տարբեր առցանց հարաբերություններում անձանց տվյալների մշակման հիմքում միայն ծառայություն ստացողի (տվյալների սուբյեկտի) համաձայնություն է (ծառայություն մատուցողի և հաճախորդի միջև պայմանագիրը, գաղտնիության քաղաքականությունը կամ ծառայության մատուցման, առցանց հարթակի օգտագործման ընդհանուր դրույթները և պայմանները և այլն (privacy policy, terms and conditions, terms and references, terms of use etc.)), ապա էլեկտրոնային հաղորդակցության, այդ թվում՝ ինտերնետային ծառայությունները հաճախորդի և ծառայություն մատուցողի միջև կնքվող պայմանագրից բացի կարգավորվում են նաև օրենքով:

Այսպես, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը հաճախորդ կամ բաժանորդ է համարում ցանկացած անձի, որն օգտագործում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ կամ դիմում է դրանց օգտագործման համար՝ բացառությամբ այն անձանց, որոնք առաջարկում կամ մատուցում են հեռահաղորդակցության ծառայություններ:[52]

Վերոնշյալի համատեքստում էական է, որ մի կողմից էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունը չի ներառում էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով հաղորդվող բովանդակության նկատմամբ խմբագրական հսկողություն տրամադրող կամ իրականացնող ծառայությունները:[53] Մյուս կողմից, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը 49-րդ հոդվածը սահմանում է հաճախորդների տեղեկությունների գաղտնիությունը՝ ի թիվս այլնի նշելով, որ յուրաքանչյուր օպերատոր և ծառայություններ մատուցող պարտավոր է իր հաճախորդների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի, տեխնիկական պայմանների և հաճախորդի անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի:[54]

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը նաև սահմանում է, որ Էլեկտրոնային հաղորդակցության ցանկացած միջոցով փոխանցվող հաղորդագրության կողմ չհանդիսացող որևէ անձ կարող է միջամտել, ձայնագրել հաղորդագրությունը կամ բացահայտել դրա պարունակությունը միայն տվյալ հաղորդագրության կողմերի գրավոր համաձայնությամբ կամ դատարանի որոշմամբ՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:[55]

Քրեական դատավարության օրենսգիրքը[56]

Առցանց անանունության իրավունքը՝ որպես անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի դրսևորում, կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Նշված նպատակների ապահովումը հաճախ համադրելի է իրավապահ մարմինների գործառույթներին:

---

[52] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172158 , «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 2

[53] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172158 , «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 2

[54] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172158 , «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 49, մաս 1

[55] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172158 , «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 50, մաս 1

[56] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176081

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ է մտել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որի նպատակը ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումն է՝ հիմնված անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա:[57]

Քրեական դատավարության օրենսգիրքն առանձին՝ 26-րդ հոդվածով անդրադառնում է մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությանը՝ ի թիվս այլնի սահմանելով, որ իրավասու մարմիններն առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ տեղեկություններ կարող են հավաքել, պահել և օգտագործել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, եթե դա անհրաժեշտ է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու համար: Նույն հոդվածով օրենսգիրքը սահմանում է, որ վարույթի ընթացքում միջամտությունն անձի նամակագրությանը, հեռախոսային խոսակցություններին և հաղորդակցության այլ ձևերին կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Նույն հոդվածով նաև նշվում է, որ վարույթի ընթացքում անձին վերաբերող և բժշկական (բացառությամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ այն ստանալու մասին տվյալի), նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկությունները կարող են հավաքվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:[58]

Քրեական դատավարության օրենսգիրքը մեկ այլ՝ 232-րդ հոդվածով սահմանում է քննիչի կողմից տեղեկատվության պահանջը, որը քննիչի գրավոր դիմումն է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունների տիրապետող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձին կամ ցանկացած այլ կազմակերպությանը: Օրենսգիրքը սահմանում է, որ տեղեկատվության պահանջը պարտադիր է դրա հասցեատիրոջ համար բացառությամբ որոշ դեպքերի, այդ թվում, երբ հայցվող տեղեկությունն օրենքով պաշտպանվող գաղտնիք է: Նույն հոդվածը քննիչին հնարավորություն է տալիս արդեն հսկող դատախազի կողմից հաստատված որոշմամբ պահանջել նաև.

- ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի միջոցով հաղորդակցվողների հեռախոսահամարները, հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները.[59]

- հեռախոսային հաղորդակցությունն սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրանց տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները.

- համացանցին միանալու և համացանցից դուրս գալու վայրը, ժամանակը և տևողությունը, համացանցն օգտագործողի կամ բաժանորդի անհատականացման տվյալները, հեռախոսահամարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, համացանցային հասցեն, ներառյալ ինտերնետ պրոտոկոլի (IP) հասցեն, համացանցային հեռախոսազանգն ստացողի անհատականացման տվյալները:

---

[57] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176081 , ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 2

[58] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176081 , ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 26, մասեր 1, 4 և 5

[59] «Անհատական տվյալներ» եզրույթն օգտագործվում է հենց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածում

Օրենսգրքի 232-րդ հոդվածը սահմանում է, որ վերոնշյալ տվյալները կարող են պահանջվել՝ այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր, մեղադրյալի նկատմամբ, տուժողի կամ վկայի նկատմամբ, եթե դա անհրաժեշտ է նրա ցուցմունքը ստուգելու համար:[60]

Քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ և 232-րդ հոդվածների համեմատությունից բխում է, որ օրենսգիրքը փորձել է տարանջատել անձնական կյանքի անձեռնմխելիությանը միջամտող տեղեկությունները անձի վերաբերյալ այլ՝ գաղտնիության ռեժիմող չծանրաբեռնված տեղեկություններից և միջազգային լավագույն փորձին համապատասխան անձնական կյանքի անձեռնմխելիությանը միջամտող տեղեկություններ ստանալու համար սահմանել ավելի բարձր չափանիշներ՝ ի թիվս այլնի նաև դատարանի որոշում, այնինչ անձի վերաբերյալ այլ՝ գաղտնիության ռեժիմող չծանրաբեռնված տեղեկությունները ստանալու համար սահմանել միջամտության ավելի նվազ չափանիշներ՝ քննիչի գրավոր դիմում կամ քննիչի՝ հսկող դատախազի կողմից հաստատված որոշում:

Այդուհանդերձ, Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածը քաղաքացիական հասարակության և հատկապես տեղեկատվական անվտանգության ոլորտի մասնագետների մոտ որոշակի մտահոգություններ է առաջացրել առանց դատական հսկողության մարդու անձնական կյանքի անձեռնմխելիությանը, այդ թվում՝ հաղորդակցության ազատությանը և առցանց անանունությանը ոչ իրավաչափ կամ ոչ համաչափ միջամտության տեսանկյունից: Նշված մտահոգությունները հաճախ եղել են անհատական հրապարակումների կամ մեկնաբանությունների տեսքով:

Քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի խնդրահարույց լինելուն անդրադարձել է նաև անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը:

Ընդհանուր առմամբ՝ Քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի կապակցությամբ մտահոգությունները կարելի է խմբավորել հետևյալ կետերով՝

- Մտահոգիչ է այն, որ Քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածը կիրառում է հնացած տերմինաբանություն: Այսպես, Քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածում նշված «անհատական տվյալներ» և «անհատականացման տվյալներ» եզրույթները հնացած են, իսկ ֆիզիկական անձին վերաբերող և նրա ինքնությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնող տվյալները 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածում և 2015 թվականին ընդունված «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կոչվում են «անձնական տվյալներ»: Թեև այս դիտողությունն առաջին հայացքից կարող է ձևական/տեխնիկական թվալ, սակայն հաշվի առնելով, որ Քրեական դատավարության նոր օրենսգիրքը ուժի մեջ է մտել 2022 թվականին, այսինքն 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության և ԱՏՊ օրենքի ընդունումից 7 տարի անց՝ օրենսգրքում նման հին տերմինաբանության կիրառումը վկայում է այն մասին, որ 232-րդ հոդվածում հաշվի առնված չեն առցանց տիրույթում անձնական կյանքի անձեռնմխելիության, առցանց անանունության իրավունքի զարգացումները և միջազգային լավագույն փորձը:

- Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «3. Հսկող դատախազի կողմից հաստատված քննիչի որոշմամբ կարող են պահանջվել նաև 1) ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի միջոցով հաղորդակցվողների հեռախոսահամարները, հեռախոսահամարի բաժանորդի

[60] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176081 , ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 232

անհատական տվյալները. (...) 3) համացանցին միանալու և համացանցից դուրս գալու վայրը, ժամանակը և տևողությունը, համացանցն օգտագործողի կամ բաժանորդի անհատականացման տվյալները, հեռախոսահամարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, համացանցային հասցեն, ներառյալ ինտերնետ պրոտոկոլի (IP) հասցեն, համացանցային հեռախոսազանգն ստացողի անհատականացման տվյալները:»:

Այս վերլուծության մեջ արդեն անդրադարձել ենք «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածին, որի 1-ին մասը սահմանում է, որ «1. Յուրաքանչյուր օպերատոր և ծառայություններ մատուցող պարտավոր է իր հաճախորդների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի, տեխնիկական պայմանների և հաճախորդի անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի:»: Արդյունքում Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված «հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները» և 3-րդ կետում նշված «համացանցին միանալու և համացանցից դուրս գալու վայրը, ժամանակը և տևողությունը, համացանցն օգտագործողի կամ բաժանորդի անհատականացման տվյալները» և «համացանցային հեռախոսազանգն ստացողի անհատականացման տվյալները» «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի գաղտնիք հանդիսացող տեղեկություններ են և, ըստ էության ստացվում է, որ քննիչը, ի թիվս այլնի, կարող է ստանալ նաև գաղտնիք հանիսացող տեղեկություններ:

Այստեղ կրկին պետք է վկայակոչել Քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը, որի 5-րդ մասը սահմանում է, որ վարույթի ընթացքում անձին վերաբերող և բժշկական, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող տեղեկությունները կարող են հավաքվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:»:

Արդյունքում, մի կողմից Քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը գաղտնիք համարվող տեղեկությունը ստանալու համար պարտադիր պայման է նախատեսում դատարանի որոշման առկայությունը, մյուս կողմից փաստացի Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված տեղեկություններն անձին վերաբերող և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ են, բայց դրանք ստանալու համար դատարանի համապատասխան որոշման առկայության պայման սահմանված չէ:

Արդյունքում ստացվում է, որ համադրելի (միևնույն կարգավիճակ, միևնույն ռեժիմ) ունեցող տեղեկությունների հավաքման (ստացման) համար Օրենսգրքի երկու տարբեր հոդվածներով սահմանված են տարբեր պայմաններ:

Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հսկող դատախազի կողմից հաստատված որոշմամբ քննիչը կարող է պահանջել և ստանալ նաև բաժանորդի «համացանցային հասցեն, ներառյալ ինտերնետ պրոտոկոլի (IP) հասցեն»:

Համացանցային հասցեն ներառում է ինչպես ինտերնետ պրոտոկոլի (IP) հասցեն, այնպես էլ միատեսակ ռեսուրսների որոնիչ էջի հասցեն (URL՝ Uniform Resource Locator) կամ ինտերնետ տիրույթի անունը (Internet domain name):

Վերոնշյալի առումով հարկ է նշել, որ մարդու առցանց վարքագիծը բացահայտող կարող է լինել ոչ միայն բուն համացանցային բովանդակությունն ինքնին, այլ նաև

ինտերնետային հասցեն առնվազն այնքանով, որքանով դա ներառում է համացանցում մարդու այցելած կայքերի հղումները և այդպիսով է բացահայտում համացանցային բովանդակությունը: Նման պայմաններում համացանցային հասցեն, ըստ էության, ընդգրկվում է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունքի շրջանակում, որին միջամտությունը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ (ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի 3-րդ մաս, ՀՀ քրեական դատավարության 26-րդ հոդվածի 4-րդ մաս, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մաս):

«Ազդարարման համակարգի մասին» օրենք[61]

Առկա են նաև օրենսդրական կարգավորումներ, որոնք միտված են ոչ թե առցանց անանունության սահմանափակմանը, այլ հակառակը՝ երաշխավորմանը:

2018 թվականին ուժի մեջ է մտել «Ազդարարման համակարգի մասին» օրենքը, որը կարգավորում է ազդարարման (whistleblowing), ազդարարման կարգի, ազդարարի իրավունքների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների՝ ազդարարման հետ կապված պարտականությունների, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

«Ազդարարման համակարգի մասին» օրենքն ի թիվս այլնի անդրադառնում է ազդարարի անանունության ապահովմանը: Մասնավորապես, օրենքը սահմանում է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի (Azdararir.am) միջոցով ազդարարի՝ անանուն եղանակով կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին տեղեկություններ հաղորդելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ օրենքը սահմանում է, որ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: Ըստ օրենքի՝ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարի անանունությունը երաշխավորվում է նրա համացանցային հաղորդակարգի հասցեն (Internet Protocol Address) ծածկագրելու միջոցով:[62]

«Ազդարարման համակարգի մասին» օրենքը նաև սահմանում է, որ ազդարարը անանուն հաղորդումը ներկայացնում է այն միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրելու միջոցով:[63] Օրենքը նաև սահմանում է, որ անանուն հաղորդում ներկայացնելիս երաշխավորվում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը ինչպես իրավասու մարմնին, այնպես էլ այլ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարը բացահայտում է իր անձնական տվյալները: Միաժամանակ, իրավասու մարմինն իրավունք չունի միջոցներ ձեռնարկելու անանուն հաղորդում ներկայացրած ազդարարի անձնական տվյալները բացահայտելու ուղղությամբ:[64]

---

[61] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131

[62] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131 , «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մասեր 1, 2 և 3

[63] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131 , «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1

[64] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131 , «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 11

Արդյունքնում, «Ազդարարման համակարգի մասին» օրենքը նախ ազդարարման ազդարարի անանունության հնարավորությունը սահմանում է միայն առցանց՝ ասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարման դեպքում, բացի այդ, ոչ միայն սահմանում է առցանց՝ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարման դեպքում ազդարարի անանունությունը, այլ նաև պահանջում է իրավասու մարմնից սեփական նախաձեռնությամբ միջոցներ չձեռնարկել ազդարարի առցանց անանունությունը վերացնելու և ազդարարի ինքնությունը բացահայտելու համար: «Ազդարարման համակարգի մասին» օրենքի այս կանոնի իմաստով առցանց՝ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարման դեպքում ազդարարի առցանց ինքնությունը բացահայտելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելն ինքնին արդեն իրավաչափ չի լինի:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը[65]

Այս վերլուծության «Առցանց անանունության ճանաչման օրինակներ միջազգային իրավունքում» քննարկվեց Standard Verlagsgesellschaft mbH v. Austria (no. 3) գործով կայացրած որոշմամբ, որով ՄԻԵԴ-ը առցանց մեկնաբանությունների հեղինակների անանունությունը չի դիտարկել որպես լրագրողական աղբյուրի գաղտնիություն և առցանց անանուն մեկնաբանություններ թողած անձանց չի համարել լրագրողական աղբյուրներ:

2021 թվականին ՀՀ ազգային ժողովում քննարկման դրվեց «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ,[66] որով ի թիվս այլնի նախատեսվում էր սահմանել անանուն աղբյուրի հասկացությունը՝ որպես համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք, որի տնօրինողի նույնականացման տվյալները թաքցված են ընթերցողից, ինչպես նաև որպես լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակում արգելվում էր հղում կատարել անանուն աղբյուրներին (բացառությամբ ԶԼՄ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի):

Դառնալով քննադատությունների առարկա՝ նախագիծը նույն տարում փոխարինվեց մեկ այլ նախագծով,[67] որով առաջարկվում էր սահմանել չնույնականացվող աղբյուրի հասկացությունը որպես համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք կամ էջ (աղբյուր), որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին: Նոր նախագծով ի թիվս այլնի նաև սահմանվում էր, որ տնօրինողի նույնականացման տվյալներն են աղբյուրը տնօրինող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման հասցեն, եթե նա լրատվական գործունեությունն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր, ապա նաև պետական հաշվառման համարը: Նոր նախագծով անանուն աղբյուրներին հղում կատարելու արգելքը[68] փոխարինվեց և նախատեսվեց, որ լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում տեղեկատվության[69] տարածման համար պատասխանատվությունից, եթե այն չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն է՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից: ԶԼՄ

[65] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164454
[66] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=60991
[67] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=7863&lang=arm
[68] Որի համար, ի դեպ, նախատեսվում էր սահմանել վարչական պատասխանատվություն
[69] «Տեղեկատվություն» եզրույթն օգտագործվում էր ԶԼՄ օրենքի նախագծում, այնինչ իրականում տվյալ դեպքում պետք է կիրառվեր «տեղեկություն» եզրույթը

օրենքը փոփոխող ու լրացնող նոր նախագիծն ընդունվեց և ուժի մեջ մտավ 2022 թվականի հունվարի 1-ին:[70]

Ըստ այդմ, ՁԼՄ օրենքում այժմ առկա են չնույնականացվող աղբյուրի հասկացությունը և աղբյուրի նույնականացման տվյալների ցանկը,[71] ինչպես նաև չնույնականացված աղբյուրին հղում անելու դեպքում լրատվամիջոցի՝ տեղեկություն տարածելու համար պատասխանատվությունից չազատվելու կանոնը:[72]

Ինչպես նշեցինք՝ ՁԼՄ օրենքում փոփոխություններ և լրացում նախատեսող նախագծի նախնական տարբերակը քննադատության արդյունքում վերախմբագրվեց: Էական է, որ նախագծից դուրս եկավ անանուն աղբյուրներին հղում կատարելու արգելքը, իսկ դրան փոխարինած՝ չնույնականացված աղբյուրին հղում անելու դեպքում լրատվամիջոցի՝ տեղեկություն տարածելու համար պատասխանատվությունից չազատվելու կանոնը առավելապես համահունչ էր այդ պահին ձևավորված դատական պրակտիկային: Այսպես, լրատվամիջոցներով անանուն եղանակով կամ կեղծ տվյալներով հանդես եկող տեղեկատվության աղբյուրի կամ հեղինակի տեղեկությունների տարածումից պաշտպանվելու մեխանիզմներ ձևավորվել էին վիրավորանքի և զրպարտության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի հետ կապված դատական նախադեպերի շրջանակում, որի համաձայն՝ երբ տեղեկատվության աղբյուրը կամ հեղինակը հանդես է գալիս անանուն եղանակով կամ կեղծ տվյալներով, այդ տեղեկության միջամտության համար պատասխանողը այդ տեղեկության «տարածողն» է (այլ կերպ՝ հրապարակողը, արտատպողը կամ վերարտադրողը):[73] Տեղեկատվության աղբյուր հասկացությունը մանրամասնորեն մեկնաբանել է Վճռաբեկ դատարանը իր թիվ ԵԿԴ/2293/02/10 և թիվ ԼԴ/0749/02/10 որոշումներում: Վճռաբեկ դատարանը առաջ է քաշել «աղբյուրի» լեգիտիմության գաղափարը, որի չափանիշների շրջանակում անանուն կամ կեղծ տվյալներով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք (օրինակ, սոցիալական ցանցերում կամ, ընդհանրապես, ինտերնետ տիրույթում գործող անանուն օգտատերերը) նույնպես լեգիտիմ «աղբյուր» չեն:[74]

Ինչ վերաբերում է անանուն աղբյուրի հասկացությանը, ապա «անանուն աղբյուր»-ը «չնույնականացվող աղբյուր»-ով փոխարինելը և աղբյուրի նույնականացման տվյալների ցանկը սահմանելը չի վերացրել ՁԼՄ օրենքի այդ կարգավորումների հետ կապված մտահոգությունները:

Մասնավորապես ՁԼՄ օրենքը չնույնականացվող աղբյուր է համարում համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք կամ էջ, որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին: Միևնույն ժամանակ, աղբյուրի նույնականացման տվյալներ են աղբյուրը տնօրինող ֆիզիկական անձի դեպքում անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման հասցեն:

---

[70] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=159043

[71] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164454 , «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 5

[72] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164454 , «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 2, կետ 3

[73] https://www.osce.org/files/f/documents/2/e/123447.pdf , Տեղեկատվական վեճերի խորհրդի «Զրպարտություն և վիրավորանք. Ձեռնարկ լրագրողների և փաստաբանների համար», էջ 13, Արա Ղազարյան, Արտակ Ձեյնալյան, Երևան, 2014

[74] https://www.osce.org/files/f/documents/2/e/123447.pdf , Տեղեկատվական վեճերի խորհրդի «Զրպարտություն և վիրավորանք. Ձեռնարկ լրագրողների և փաստաբանների համար», էջ 42, 43

Այլ կերպ ասած՝ ՁԼՄ օրենքը համարում է, որ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հասցեն արդեն իսկ բավարար էր պնդելու համար, որ օգտատերը և ըստ այդմ՝ աղբյուրն անանուն չէ: Այս առումով պետք է նշել, որ աղբյուրը տնօրինողի նույնականացման տվյալների շրջանակն այնպիսին է, որ ոչ ընթերցողները, ոչ լրատվամիջոցը կամ լրագրողը չի ունենալու և չի էլ կարողանալու ունենալ տվյալների այնպիսի շտեմարան, որով կկարողանա պարզել՝ արդյո՞ք օգտատերը հանդես է գալիս իր իրական անուն և ազգանունով, թե՝ կեղծանունով կամ հնարած անուն և ազգանունով, կամ արդյո՞ք նշված հասցեն իրական բնակության հասցե է, թե՝ ոչ: Արդյունքում ստացվում է, որ համացանցում ցանկացած օգտատեր, ում օգտահաշվում նշված է որևէ անուն, որևէ ազգանուն և որևէ հասցե, արդեն իսկ ՁԼՄ օրենքի իմաստով կհամարվի նույնականացված աղբյուր, այնինչ ոչ իրական անուն, ազգանուն և հասցե օգտագործող օգտատերը փաստացի առցանց հանդես է գալիս անանուն և մնում է փաստացի չնույնականացված:

Եզրահանգում

- Հայաստանում առցանց անանունության հնարավորությունը ինչպես երաշխավորող, այնպես էլ սահմանափակող ոլորտային օրենքները կարող են պարունակել ինչպես միջազգային լավագույն փորձին համապատասխան, այնպես էլ հակասող կարգավորումներ: Առանձնապես խնդրահարույց են առցանց անանունության իրավունքը սահմանափակող ոլորտային օրենքները. դրանցում հաճախ հաշվի չեն առնվում անձնական կյանքի գաղտնիության և արտահայտվելու ազատության իրավունքների, այդ թվում՝ առցանց անանունության իրավունքի ոլորտում զարգացումները, պատշաճ չի գնահատվում անանունության իրավունքի սահմանափակման ազդեցությունը և համաչափությունը անձնական կյանքի գաղտնիության և արտահայտվելու ազատության իրավունքներին միջամտության տեսանկյունից:

- Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածը խնդրահարույց է, թյուրըմբռնումների և տարընթերցումների տեղիք է տալիս, տպավորություն է, որ գրվել է Քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման աշխատանքների սկզբում և ընդունման ժամանակ չի վերանայվել, չի արդիականացվել և չի ներդաշնակեցվել ոլորտային այլ օրենքների կարգավորումների հետ:

- Չնույնականացվող աղբյուրի հասկացության և աղբյուրը տնօրինողի նույնակացման տվյալների ցանկի վերաբերյալ ՁԼՄ օրենքի դրույթները խնդրահարույց են, ակնհայտորեն չեն ծառայում իրենց կարգավորման բեռին և պիտանի չեն լրատվության/տեղեկատվության աղբյուրի հավաստիության և վստահելիության ապահովման համար, ըստ այդմ առցանց անանունությանը (որպես երևույթ) հակասող մեկնաբանությունների և թյուրըմբռնումների առիթ են ստեղծում:

Առաջարկություններ

- Առցանց անանունության իրավունքն ու առցանց անանունության իրավունքի սահմանափակումները կարգավորող առանձին օրենքի անհրաժեշտություն չկա: ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով և Սահմանադրությամբ սահմանված անձնական կյանքի անձեռնմխելիության և արտահայտվելու ազատության իրավունքները բավարար են առցանց անանունության իրավունքը պատշաճ ապահովելու համար:

- Առցանց միջավայրում մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության և արտահայտվելու ազատության իրավունքները, այդ թվում՝ առցանց անանունության իրավունքը պետք է երաշխավորվեն ճիշտ այնպես, ինչպես ֆիզիկական աշխարհում, իսկ պետությունը առցանց միջավայրում մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության և արտահայտվելու ազատության իրավունքները, այդ թվում՝ առցանց անանունության իրավունքը սահմանափակելու հարցում կաշկանդված է ճիշտ այնպես, ինչպես ֆիզիկական աշխարհում:

- Պետությունը (կառավարությունը և ազգային ժողովը) պետք է ապահովի առցանց միջավայրում մարդու իրավունքներին որևէ կերպ առնչվող/սահմանափակող նոր իրավական ակտերի համապատասխանությունը անձնական կյանքի անձեռնմխելիության և արտահայտվելու ազատության իրավունքներին, իսկ արդեն գործող նմանատիպ իրավական ակտերը պետք է գնահատվեն անձնական կյանքի անձեռնմխելիության և արտահայտվելու ազատության իրավունքների տեսանկյունից և ըստ անհրաժեշտության վերանայվեն:

- Անհրաժեշտ է վերսկսել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը ներկայացվող պահանջների վերանայումը, պահանջների ցանկից բացառել քաղաքացիության, ստորագրության և կոնկրետ բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցե նշելու պահանջները, ապահովել անանուն հարցում ներկայացնելու իրավական հիմքերը և գործնական հնարավորությունները:

- Վերանայել Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածը, 232-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված տեղեկությունների ցանկից բացառել գաղտնիք հանդիսացող, այդ թվում՝ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակող տեղեկությունները, ներառյալ՝ համացանցային հասցեն, փոխարենը սահմանել, որ վարույթի ընթացքում այդ տեղեկությունների հավաքումը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Բացի այդ, անհրաժեշտ է Քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի տերմինաբանությունը համապատասխանեցնել Սահմանադրության և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի տերմինաբանությանը:

- ՁԼՄ օրենքից հանել չնույնականացվող աղբյուրի հասկացության և աղբյուրը տնօրինողի նույնականացման տվյալների ցանկի վերաբերյալ դրույթները, ըստ այդմ դատական պրակտիկայի և միջազգային լավագույն փորձին համահունչ վերանայել չնույնականացված աղբյուրին հղում անելու դեպքում լրատվամիջոցի՝ տեղեկություն տարածելու համար պատասխանատվությունից չազատվելու վերաբերյալ դրույթը (ձևակերպումը):